



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
Խորհրդի կողմից
08.01.2020թ. Խորհրդի նիստի թիվ 01
արձանագրություն

Խորհրդի նախագահ՝ Դ.Է. Խաչատրյան

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՄԲ

HEALTH INSURANCE CONDITIONS WITH COMPENSATION OF MEDICAL TREATMENT EXPENSES ABROAD

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

CONTENT

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ
- 2.1. Ապահովագրման ենթակա անձինք
- 2.2. Լրացումներ, փոփոխություններ և Ձեր մտածելու ժամանակը
- 2.3. Ծածկույթի սկզբի ամսաթիվ և վերակնքման ամսաթիվ
- 2.4. Ապահովագրավճար
- 2.5. Փոփոխություններ Ապահովագրության պայմանագրում
- 2.6. Դադարեցում
- 2.7. Այլ ապահովագրություն
- 2.8. Սուբրոգացիա
- 2.9. Օգնություն և միջամտություն
- 2.10. Երրորդ կողմի իրավունքներ
- 2.11. Տվյալների պաշտպանություն
3. ՄԱՍ 1.
- 3.1. ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 3.2. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԴԵՊԵՐ
4. ՄԱՍ 2.
5. ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
6. ՀԱՏՈՒՑՈՒՄ

1. DEFINITIONS
2. GENERAL CONDITIONS
- 2.1. Eligibility
- 2.2. Additions, modifications and your cooling off period
- 2.3. Start date and renewal date of cover
- 2.4. Premiums
- 2.5. Alterations to the policy
- 2.6. Termination
- 2.7. Other insurance
- 2.8. Subrogation
- 2.9. Help and intervention
- 2.10. Third party rights
- 2.11. Data protection
3. SECTION 1.
- 3.1. COVERED BENEFITS.
- 3.2. WHAT IS NOT COVERED
4. SECTION 2.
5. HOW TO OBTAIN INFORMATION
6. REIMBURSEMENT

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. DEFINITIONS

Սույն Պայմանների շրջանակներում.

Ահաբեկչական գործողություն

Ահաբեկչական գործողությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում բռնի գործողությունների կիրառումն է ֆիզիկական անձի կամ անձանց խմբի կողմից միայնակ կամ որևէ կազմակերպության կամ կառավարության անունից հանդես գալով՝ քաղաքական, կրոնական, գաղափարախոսական կամ այլ նմանատիպ պատճառներով կամ նպատակներով, ներառյալ կառավարությունների վրա ազդեցություն ունենալու և/կամ հասարակության/հասարակության որևէ զանգվածին վախի մթնոլորտի մեջ պահելու միտումը:

For the purposes of these Conditions:

Act of terrorism

An act of terrorism means an act, including but not limited to, the threat or use of force or violence of any person or group of persons whether acting alone or on behalf of any organisations or governments, committed for political, religious, ideological or similar purposes or reasons including the intention to influence governments and/or to put the public or any section of the public, in fear.

Սարքավորումներ

Այն սարքերն ու գործիքներն են, որոնք կիրառվում են որպես բուժող բժշկի/բժիշկ-մասնագետի կողմից նախատեսված վիրաբուժական գործընթացի անբաժանելի մաս՝ բացառությամբ պրոթեզների կամ տևալիս օգտագործման բժշկական սարքավորումների:

Appliances

Devices and equipment when used as an integral part of a surgical procedure administered by a **medical practitioner/specialist** except those defined as **prosthesis** or **durable medical equipment**.

Տարեկան առավելագույն սահմանաչափ

Annual maximum



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

Մեր կողմից հատուցվող առավելագույն գումարի չափն է բոլոր **ծառայությունների** գծով յուրաքանչյուր **ապահովագրված անձի** գծով յուրաքանչյուր **ապահովագրության գործողության ժամկետի** համար:

The maximum **we** will pay for all **benefits** in total, per **insured person**, per **period of cover**.

Ծառայություն(ներ)

Սույն **Ապահովագրության պայմանագրով**, դրա ընդարձակմամբ, սահմանափակումներով, հատուկ պայմաններով կամ փոփոխություններով/լրացումներով սահմանված ապահովագրական ծածկույթն է:

Benefit(s)

Insurance cover provided under the **Policy** and any extension, restrictions, special conditions or endorsements as noted in the **Policy**.

Ծառայությունների գծով սահմանաչափ(եր)

Ծառայությունների ցանկում նշված որոշ **Ծառայությունների** կամ տվյալ **Ծառայության** որոշ մասերի նկատմամբ կիրառվող սահմանափակում, որը կարող է արտահայտված լինել թե՛ արժեքով, թե՛ ծառայության մատուցման հաճախականությամբ: **Ծառայությունների** գծով բոլոր սահմանաչափերը կիրառվում են տվյալ **ապահովագրված անձի** գծով և կամ տվյալ **հիվանդության** համար կամ տվյալ **ապահովագրության գործողության ժամկետի**:

Benefit Limit(s)

A limitation that applies to selected **Benefits** or parts of a particular **Benefit** as noted on the **Benefit Schedule**. These can either be limited by cost or frequency. All **benefit** limits are applied per **insured person**, and either per **medical condition** or per **period of cover**.

Ծառայությունների ցանկ

Ծածկույթների ցուցակ՝ ծածկույթի ծավալի, այդ թվում՝ գումարային կամ հաճախականությամբ պայմանավորված սահմանափակումների նկարագրությամբ, որոնք կարող են կիրառվել:

Benefit Schedule

The list of **Benefits** outlining the scope of cover provided including any monetary or frequency limits that may be applicable.

Ոսկրածուծի փոխպատվաստում

Ոսկրածուծի փոխպատվաստումը (BMT) Արյան ծայրամասային ցողունային բջիջների փոխպատվաստումն է (PBSCT) ապահովագրված անձին իրենից (Աուտոլոգիական ոսկրածուծի փոխպատվաստում) կամ կենդանի համատեղելի դոնորից (ալոգենային ոսկրածուծի փոխպատվաստում):

Bone marrow transplant

The Bone Marrow Transplantation (BMT) or Peripheral Blood Stem Cell Transplantation (PBSCT) of bone marrow cells to the insured originating from either the insured (Autologous bone marrow transplant) or from a living compatible donor (allogeneic bone marrow transplant).

Քաղցկեղ(ներ)

Հիվանդություն, որն առաջացնում է չարորակ բջիջների պաթոլոգիական աճ և վերարտադրություն, մարդկային մարմնի տարբեր հատվածներում ուռուցքային գոյացություններ, որոնք ներթափանցում և ախտահարում են նորմալ պերիֆերիկ հյուսվածքները և տարածվում մարմնի այլ հատվածների վրա արյունատար, ավշային անոթների և խոռոչների միջոցով, ինչը ախտաբանական թեստի արդյունքում ախտորոշվել է որպես չարորակ ուռուցք՝ համաձայն ԱՀԿ-ի Հիվանդությունների միջազգային դասակարգման (ICD-10):

Cancer (s)

A disease that features the abnormal growth and replication of malignant cells, tumours or masses affecting any site of the human body and infiltrating and damaging the normal peripheral tissues, and spread to other regions of the body through the blood vessels, lymphatic vessels and body cavities, which, as confirmed by pathological test result, is clinically diagnosed as malignant tumour defined by the WHO's International Classification of Diseases (ICD-10).

Բնակության երկիր

Հայաստան

Country of residence

Armenia

Ուղեղային շրջանառության խանգարում (CVA)

Ուղեղի բջիջների հանկարծակի մահն է թթվածնի պակասի արդյունքում, երբ արյան հոսքը դեպի ուղեղ խանգարվում է գլխուղեղը սնուցող զարկերակի խցանման կամ պատռման հետևանքով:

Cerebrovascular Accident (CVA)

The sudden death of brain cells due to the lack of oxygen when the blood flow to the brain is impaired by blockage or rupture of an artery to the brain.

Բնածին խանգարումներ

Ծնունդի պահին առկա պաթոլոգիաներ, դեֆորմացիա, հիվանդություններ կամ վնասվածքներ՝ անկախ ծնունդի պահին ախտորոշված լինելու հանգամանքից:

Congenital disorder

Abnormalities, deformities, diseases, illnesses or injuries present at the time of birth, whether diagnosed at the time or not.

Գլխուղեղային համախտանիշ

Գլխուղեղի խանգարման կամ վնասվածքի առկայություն, որի արդյունքում առաջանում է գլխուղեղի աշխատանքի մասնակի կամ ամբողջական նվազում:

Cerebral syndrome

The presence of a cerebral disorder or damage to the brain resulting in the partial or total reduction of brain function.

Աորտակորոնար շունտավորում

Coronary artery bypass surgery



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

Սրտի մեկ կամ մի քանի փականների փոխարինում կամ վերականգնում՝ հիվանդությամբ կամ վնասվածքով պայմանավորված, սովորաբար պահանջվում է խորհրդատվություն **խորհրդատու սրտաբանի** հետ:

Խորհրդատու սրտաբան

Մասնագետ, ով ախտորոշում, գնահատում և բուժում է սրտի և արյունատար անոթների (սրտանոթային համակարգի) հիվանդություններ և արատներ ունեցող պացիենտներին:

Խորհրդատու նյարդաբան

Մասնագետ, ով իրականացնում է ախտորոշում, գնահատում և **վիրահատություն**՝ նյարդային համակարգի խանգարումների բուժման նպատակով:

Ապաքինում

Բուժման ծրագրով հաստատված ժամանակաշրջան, որն անհրաժեշտ է հիվանդությունից հետո վերականգնման համար:

Կոսմետիկ բուժում

Կոսմետիկ կամ էսթետիկ **բուժման** գծով ծախսեր կամ ծախսեր՝ կապված ցանկացած այնպիսի **բուժման** հետ, որն իրականացվում է ցանկացած **առողջական վիճակի** կամ հոգեբանական վիճակի, **վնասվածքի** կամ նախորդ **վիրահատության** արդյունքում առաջացած արտաքին տեսքի վերականգնման համար, բացառությամբ **Ծառայությունների ցանկում** հատուկ նշված դեպքերի:

Մուտքի ամսաթիվ/Սկզբի ամսաթիվ

Տվյալ **ապահովագրված անձի** գծով **ապահովագրության պայմանագրի** ուժի մեջ մտնելու ամսաթիվ:

Խնամքի տակ գտնվող անձինք

Ամուսիններից մեկը կամ չափահաս զուգընկերը, **հիմնական ապահովագրված անձի** ծնողները կամ չամուսնացած երեխաները, խորթ երեխաները կամ օրինական կարգով որդեգրված երեխաները՝ պայմանով, որ **ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվա** դրությամբ կամ ցանկացած հաջորդող **վերակնքման օրվա** դրությամբ նրանց 19 տարին լրացած չէ (կամ 26 տարին չլրացած և ստացիոնար կրթություն են ստանում): Ապահովագրվելու համար խնամքի տակ գտնվող բոլոր անձինք պետք է նշվեն **Ապահովագրության պայմանագրում**՝ որպես **ապահովագրված անձինք**:

Վիստորոշիչ հետազոտություններ

Ռենտգենյան ճառագայթմամբ հետազոտություններ, արյան անալիզներ և պաթոլոգիա՝ առողջական վիճակի ախտանիշների պատճառը գտնելու նպատակով:

Դեղամիջոցներ և վիրակապային նյութեր

Դեղատոմսի հիման վրա տրամադրվող հիմնական դեղամիջոցներ, վիրակապային նյութեր, որոնք հարկավոր են հատուցելի առողջական վիճակի բուժման համար և թույլատրված ու ընդունված են այն երկրում, որտեղ նշանակվել են, և որոնց ընդունումը վերահսկվում է **բուժող բժշկի** կամ **բժիշկ-մասնագետի** կողմից:

Տևային օգտագործման բժշկական սարքավորումներ

Բուժման կամ տնային պայմաններում խնամքի համար օգտագործվող առարկաներ, միջոցներ, սարքեր կամ սարքավորումներ, այդ թվում՝ օրթոպեդիկ հենակներ և բռնակներ (ներառյալ՝ սուպլիսատորներ), անթացույցներ, անվասայլակներ, խոսելու դժվարություններ ունեցողների

The surgery to replace or repair one or more cardiac valves, whether due to damage or disease, generally requires a consultation with a **consultant cardiologist**.

Consultant Cardiologist

Specialists that diagnose, assess and treat patients with diseases and defects of the heart and blood vessels (the cardiovascular system).

Consultant Neurologist

Specialists that diagnose, assess and perform **surgery** to treat disorders of the nervous system.

Convalescence

The period of recuperation from an illness as approved in the **Treatment Plan**.

Cosmetic treatment

Treatment costs relating to cosmetic or aesthetic **treatment** or any **treatment** which is carried out to restore **your** appearance as a result of any **medical condition** or psychological condition, **injury** or previous **surgery** except as is particularly specified in the **benefit schedule**.

Date of entry/Start date

The date from which the **policy** is effective for the **Insured person**.

Dependents

One spouse or adult partner, parents of the **principle member** or any unmarried children, step-children or legally adopted children provided that they are under the age of 19 (or under age 26 and in full-time education) on the **start date** of the **policy** or at any subsequent **renewal date**. In order to be insured all dependents must be named as **insured persons** in the **Policy**.

Diagnostic tests

Investigations such as x-rays, blood tests and pathology to assist in finding the cause of symptoms of a medical condition

Drugs and dressings

Essential prescription drugs, dressings and medicines needed to treat an eligible medical condition, which are authorised and recognised in the country where they are prescribed and are administered by a **medical practitioner** or **specialist**.

Durable medical equipment

Any items, supplies, equipment or devices used in the course of medical **treatment** or home care. These may include but are not limited to orthopaedic supports and braces (including arch-supports), crutches, wheelchairs, speaking aids and any medical or surgical supplies.



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

համար սարքեր և այլ բժշկական կամ վիրաբուժական միջոցներ:

Փորձարարական բուժում

Մեր կողմից փորձարարական կամ ընդհանուր բժշկական պրակտիկայում չհիմնավորված համարվող կամ չարտոնագրված բժշկի կամ **ընտանիքի անդամի** կողմից ընդունված **բուժման**, ծառայությունների մատուցման կամ **դեղորայքային** թերապիայի գծով ծախսեր:

Մշտական բնակության երկիր

Այն երկիրը, որում Ապահովագրված անձը բնակվում է օրացուցային տարվա 12 ամիսների ընթացքում: Տվյալ դեպքում այդ երկիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Սրտի փականի փոխարինում

Վիրահատական միջամտությամբ սրտի մեկ կամ մի քանի փականների փոխատվաստում կամ վերականգնում հիվանդությանը կամ վնասվածքով պայմանավորված, սովորաբար պահանջվում է խորհրդատվություն **խորհրդատու սրտաբանի** հետ:

Բուժաստատություն

Իր գործունեության երկրի օրենսդրությամբ որպես բուժաստատություն գործելու թույլտվություն ունեցող որևէ հաստատություն կամ այլ համապատասխան արտոնություն ունեցող և նույն նպատակներով գործունեություն ծավալող բժշկական հաստատություն, որոնք վերահսկվում են համապատասխան առողջապահական մարմինների կողմից իրենց գտնվելու երկրում:

Ապահովագրության պայմանագիր

Սույն **Պայմանների** հիման վրա կնքված ապահովագրության Պայմանագիր:

Ապահովագրական ընկերություն

«ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Ապահովագրության պայմաններ

Սույն Ապահովագրության Պայմանները

Ապահովագրված անձ (անձինք)/ Դուք/Ձեր

Հիմնական ապահովագրված անձ և նրա **խնամքի տակ գտնվող անձինք** (եթե առկա են), որոնք նշված են **Ապահովագրության պայմանագրում**:

Ստացիոնար պացիենտ

Բուժում ստանալու նպատակով մեկ կամ ավելի գիշերակացով **բուժաստատություն** ընդունված պացիենտ:

Մարդու օրգանների կամ հյուսվածքների փոխպատվաստում՝ կենդանի դոնորից

Վիրաբուժական միջամտություն, որի ընթացքում **ապահովագրված անձին** փոխպատվաստվում են երիկամ, լյարդի մի հատված, թոքի բլիթ կամ ոսկրածուծ մեկ այլ կենդանի դոնորից, որը համատեղելի է ճանաչվել համապատասխան առողջապահական մարմնի կողմից:

Ընդամենը սահմանաչափ ամբողջ կյանքի ընթացքում

Սույն **Պայմանների Ծառայությունների ցանկում** սահմանված ընդհանուր ծախսերը **ապահովագրության գործողության ժամկետի** ընթացքում:

Բուժող բժիշկ

Experimental Treatment

Any costs in connection with **treatment**, services or **drug** therapy that is deemed by **us** to be experimental or unproven based on generally accepted medical practice or provided by an unlicensed physician or any **immediate family member**.

Home country/Country of residence

The territory in which your Insured resides for a period of 12 months of the calendar year. In this case, it is territory of Armenia.

Heart valve replacement

The **surgery** to replace or repair one or more heart valves, whether due to damage or disease, generally requires a consultation with a **consultant cardiologist**.

Hospital

Any establishment, which is licensed as a medical or surgical hospital under the laws of the country where it operates, or other suitably licensed medical facilities used for the same purpose and which are licensed and supervised by the appropriate medical authorities in the country in which they are based.

Policy/the policy

Policy concluded based on these **Conditions**.

Insurance Company

Means “Rosgosstrakh Armenia” ICJSC.

Insurance Conditions

These Insurance Conditions

Insured person(s)/you/your

The **principal member** and the **dependents** (if any) named on the **Policy**.

In-patient

A patient who is admitted to **hospital** and who occupies a bed overnight or longer for medical reasons.

Live-donor organ or tissue replacement

A surgical procedure in which the **insured person** receives a kidney, a segment of liver, a pulmonary lobe or bone marrow from another living donor that has been recognised by an appropriate medical authority as compatible.

Lifetime Limit

The total expenses for the **period of cover** as stated in the **Schedule of Benefits** of these **Conditions**.

Medical Practitioner

A physician who has attained primary degrees in medicine or



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

Բժիշկ, ով ստացել է բժշկության կամ վիրաբուժության ոլորտի հիմնական որակավորումները բժշկական կրթական հայտնի հաստատություններից մեկում, և ով ունի պրակտիկ բուժօգնություն ցուցաբերելու թույլտվություն այն երկրի օրենսդրության համաձայն, որտեղ իրականացվում է բուժօգնությունը՝ իրենց թույլտվության սահմաններում:

Բժշկական անհրաժեշտություն

Բուժում, որը որակավորված պրակտիկ բժշկի/բժիշկ-մասնագետի կառնիքով կիրառելի է և համապատասխանում է ախտորոշմանը, գնահատվում է որպես բժշկական արժեք ներկայացնող մեթոդ և որն իրականացվում է համընդհանուր ընդունված բժշկական ստանդարտների համաձայն և որը բացառելն անհնար է՝ առանց ապահովագրված անձի վիճակի վրա բացասաբար ազդելու կամ ցուցաբերվող բժշկական խնամքի որակի վրա ազդելու: Նման բուժման անհրաժեշտությունը չպետք է պայմանավորված լինի պացիենտի կամ բուժող բժշկի/բժիշկ-մասնագետի հարմարությամբ և պետք է իրականացվի միայն համապատասխան ժամանակահատվածի ընթացքում:

Դեղամիջոց

Որևէ դեղագործական նյութ կամ նյութերի միացություն, որն ունի իմունոլոգիական կամ նյութափոխական ազդեցություն, հասանելի է միայն որակավորված բժիշկի կողմից դուրս գրված դեղատոմսով, տրամադրվում է միայն արտոնագրված դեղագործի կողմից և օգտագործվում է թերապևտիկ նպատակներով կամ բժշկական ախտորոշման համար: Եթե բժիշկը նշանակել է օրիգինալ դեղամիջոց, այն կարող է փոխարինվել գեներիկով՝ նույն ակտիվ բաղադրիչներով, հատկություններով և հասանելի չափաբանակներով:

Նյարդավիրաբուժություն

Գլխուղեղի կամ ներգանգային այլ կառույցների վրա կատարվող ցանկացած վիրահատական միջամտություն և ողնուղեղի բարորակ ուռուցքների վիրահատական բուժում:

Ամբուլատոր պացիենտ

Անձ, որն այցելում է բուժաստատություն, խորհրդատվական սենյակ կամ կլինիկա, և չի ընդունվում ստացիոնար կամ ցերեկային-ստացիոնար բուժման:

Ապահովագրության գործողության ժամկետը

Ապահովագրության պայմանագրի մեջ սահմանված ապահովագրության գործողության ժամկետն է: Սովորաբար այն լինում է 12 ամիս՝ **Սկզբի ամսաթվից** կամ ցանկացած հաջորդ վերականգման (եթե կիրառելի է) **ամսաթվից** սկսած:

Նախնական թույլտվություն

Ծառայությունների ցանկից Ձեր ընտրած **ծառայությունների** գծով բուժում ստանալուց առաջ անհրաժեշտ է նախապես ստանալ **Մեր** հաստատումը:

Նախկինում առկա հիվանդություն

Որևէ **առողջական վիճակ** կամ դրա հետ **առնչություն ունեցող վիճակ**, որի համար **Դուք** ստացել եք բուժում, ունեցել եք որևէ ախտակիչ (հետազոտված և/կամ չհետազոտված) կամ ստացել եք խորհրդատվություն՝ Ձեր **մուտքի ամսաթվին** նախորդող 10 տարիների ընթացքում:

Պրոթեզ

Մարմնի մասի արհեստական փոխադիր՝ սահմանափակվելով աչքի, հոդի և վերջույթի փոխադիրներով: **Էնդոպրոթեզների** ծանոթանալու համար տես **«Սարքավորումներ»**:

surgery at a recognised medical school and who is licensed to practice medicine under the law in the country in which **treatment** is given within the limits of their license.

Medically necessary

Treatment, which in the opinion of a qualified **medical practitioner/specialist** is appropriate and consistent with the diagnosis, is proven and demonstrated to have medical value and which is in accordance with generally accepted medical standards, could not have been omitted without adversely affecting the **insured person's** condition or the quality of medical care rendered. Such **treatment** must be required for reasons other than the comfort or convenience of the patient or **medical practitioner/ specialist** and provided only for an appropriate duration of time.

Medication

Any pharmacological substance or combination of substances exerting an immunological or metabolic effect, available only on prescription by a qualified doctor, dispensed by a licensed pharmacist and administered for therapeutic purposes, or for making a medical diagnosis. Where a doctor prescribes branded **medication**, this may be substituted by a non-branded alternative with the identical active ingredients, potency and available dosage.

Neurosurgery

This involves any surgical procedure performed on the brain or any other structures within the cranium and **surgical treatment** of benign tumours located in the spinal cord.

Out-patient

A patient who attends a **hospital**, consulting room or clinic and is not admitted as a day-patient or in-patient.

Period of cover

The period of cover set out in the **Policy**. This will usually be a 12-month period starting from the **start date** or any subsequent **renewal date** as applicable.

Pre-authorization

The confirmation needed to be obtained from **Us** before receiving **treatment** for selected **benefits** as defined in the **benefit schedule**.

Pre-Existing Condition

Any **medical condition**, or any **related condition** for which **you** have received **treatment**, suffered any symptoms (whether investigated or not) or sought advice for 10 years prior to **your date of entry**.

Prosthesis

An artificial substitute or replacement for part of the body limited to eyes, joints and limbs. For internal **prosthesis**, refer to **'appliances'**.



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

Կայուն վեգետատիվ վիճակ/ նյարդային խանգարում

Զրոնիկ անգիտակից վիճակ գլխուղեղի կիսագնդերին հասցրած ուժեղ վնասի արդյունքում, որի ժամանակ **Դուք** չեք կարող ցուցադրել որևէ վարքային կամ ուղեղային նյութափոխական ապացույցներ կոգնիտիվ ֆունկցիաների ամկայության կամ ի վիճակի լինելու սովորական ձևով արձագանքել արտաքին իրադարձություններին կամ ազդակներին:

Persistent vegetative state/neurological damage

Chronic state of unconsciousness resulting from overwhelming damage to the cerebral hemispheres whereby **you** are unable to express any behavioural or cerebral metabolic evidence of possessing cognitive function or being able to respond in a learned manner to external events or stimuli.

Ողջամիտ և ստանդարտ ծախսեր

Ստանդարտ վճարում **Ձեր բուժման** ծախսերի դիմաց այն երկրում, որտեղ տեղի է ունեցել **բուժումը**: **Մեր** կողմից կարող է պահանջվել, որ նման ծախսերը հիմնավորվեն երրորդ կողմի կողմից:

Reasonable and customary charges

The standard fee that would typically be made in respect of **your treatment** costs, in the country where the **treatment** took place. **We** may require such fees to be substantiated by an independent third party.

Անչուություն ունեցող վիճակ(ներ)

Որևէ առողջական վիճակ, որը կարող է համարվել **Ձեր** կողմից ներկայացված հայտի հիմքում ընկած առողջական վիճակի պատճառ կամ դրանով անմիջականորեն պայմանավորված վիճակ:

Related condition(s)

Any medical condition that can deem to be either an underlying cause of or directly attributable to the medical condition to which **you** are claiming.

Վերակնքման ամսաթիվ

Ապահովագրության պայմանագրի սկզբի ամսաթվից սկսած մեկ տարի հետո: Սա **Ապահովագրության պայմանագրում** նշված ավարտի ամսաթվին հաջորդող օրն է:

Renewal date

The anniversary of the **start date** of the **policy**. This will be the day following the expiry date as shown on the **Policy**.

Կացություն

Ստանդարտ մեկ տեղանոց առանձնասենյակ կամ ընդհանուր սենյակ առանձին սանհանգույցով:

Room and board

Refers to a standard private single room or semi-private room with a private bathroom.

Մասնագետ

Վիրաբույժ, անեսթեզիոլոգ կամ բժիշկ, ով ստացել է բժշկության կամ **վիրաբուժության** ոլորտի համապատասխան որակավորումները և ով ունի պրակտիկ բուժօգնություն ցուցաբերելու թույլտվություն՝ շնորհիվ այն երկրի համապատասխան մարմնի կողմից, որտեղ իրականացվում է **բուժումը**, ով համարվում է մասնագիտական որակավորում կամ համապատասխան փորձ ունեցող անձ՝ տվյալ դեպքի/հիվանդության կամ վնասվածքի **բուժում** իրականացնելու համար:

Specialist

A surgeon, anesthetist or physician who has attained primary degrees in medicine or **surgery** who is licensed to practice medicine by the relevant authority in the country where the **treatment** is given, and is recognised as having a specialised qualification in the field of, or expertise in, the **treatment** of the disease, illness or injury being treated.

Վիրահատություն

Մարմնի մասի կամ օրգանիզմի համակարգի հիվանդության կամ վնասվածքների **բուժման** համար անհրաժեշտ ցանկացած վիրահատություն կամ միջամտություն: Պրոցեդուրան իրականացվում է որակավորված վիրաբույժի կողմից՝ կտրվածքի կամ մարմնի խորքը թափանցելու միջոցով: **Բուժումը** պետք է իրականացվի հավատարմագրված **բուժհաստատության** վիրահատարանում:

Surgery

This refers to any operation or intervention that is required for the **treatment** of disease or injury of any body part or system. The procedure involves an incision or internal entry and is completed by a qualified surgeon. The **treatment** must be provided in the operative theatre of an accredited **hospital**.

Բուժում(ներ)

Ցանկացած բժշկական կամ վիրահատական ծառայություն (ներառյալ **ախտաբանական հետազոտությունները**), որոնք անհրաժեշտ են որևէ **առողջական վիճակի**, հիվանդության կամ վնասվածքի ախտորոշման, թեթևացման, հսկման կամ բուժման համար՝ մեր կողմից հաստատված **մասնագետի ցուցումների** համաձայն:

Treatment(s)

Any medical or surgical services (including **diagnostic tests**) that are needed to diagnose, relieve, manage or cure any **medical condition**, illness or injury under the direction of a recognised **specialist**.

Մենք/մեր/մեզ

Ռոսգոստրախ Արմենիա և Ջեներալի և որևէ այլ կազմակերպություն, որն իրականացնում է ադմինիստրատիվ, կառավարման կամ այլ նմանատիպ ծառայություններ՝ տվյալ **Պայմանագրի** գործողության շրջանակներում:

We/us/our

Rosgosstrakh Armenia and Generali and any company(ies) that provide administrative, management and related services involved in the operation of the **policy**.

Սպասման ժամկետ

Waiting Period



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

Ժամանակահատված՝ սկսած **ապահովագրված անձի մուտքի ամսաթվից**, որի ընթացքում **ապահովագրված անձի** գծով չեն կիրառվում որոշ **ծառայություններ**: **Ձեր ծառայությունների ցանկում** նշված կլինեն **ծածկույթի** այն կետերը, որոնց գծով կիրառվում են սպասման ժամկետներ:

Is a period of time starting on the **date of entry** of the **insured person**, during which the **insured person** is not entitled to **cover** for particular **benefits**. **Your benefit schedule** will indicate which **benefits** are subject to waiting periods.

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2. GENERAL CONDITIONS

Սույն ապահովագրության պայմանները (այսուհետ՝ **Պայմաններ**) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և Ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից շնորհված թիվ ԱՊՈ 0009 Լիցենզիայի Առողջության ապահովագրություն դասին:

Present insurance conditions (hereinafter referred to as **Conditions**) are set according to the Civil Code and the law on Insurance and Insurance activity of RA and are in accordance with the class of health Insurance of the License N 0009 issued and provided by the Central Bank of the RA.

2.1. Ապահովագրման ենթակա անձինք
Դուք՝ հիմնական ապահովագրված անձը, ապահովագրության պայմանագրի կնքելու պահին, Ձեր տարիքը պետք է կազմի 16-69 տարեկան, իսկ ապահովագրության պայմանագրի վերակնքումը կարող է իրականացվել մինչև Ձեր 85 տարին լրանալը:

2.1. Eligibility
You, the **principal member** must be aged between 16 – 69 years to join the **policy** and renewal is available until 85 years of age.

Խնամքի տակ գտնվող անձինք (ամուսին/զուգընկեր/ծնողներ և/կամ երեխաներ), որոնք ցանկանում են օգտվել ապահովագրությունից, պետք է համատեղ բնակություն վարեն **հիմնական ապահովագրված անձի** հետ:

Dependents (spouse/partner/parents and/or children) applying to the plan must be living with the **principal member**.

Խնամքի տակ գտնվող երեխաների տարիքը պետք է 19 տարեկանից ցածր լինի (կամ 25 տարեկանից ցածր, եթե ստացիոնար կրթություն ստացող ուսանող է) և կարող են **Ապահովագրության պայմանագրի** շրջանակներում օգտվել ծածկույթից մինչև նրանց 19 տարին լրանալուն (կամ ստացիոնար կրթություն ստանալու դեպքում՝ նրանց 25 տարին լրանալուն), հաջորդող **վերակնքման ամսաթիվը**, երբ նրանց գծով **ծածկույթը** տվյալ **Ապահովագրության պայմանագրի** շրջանակներում կավարտվի:

Dependent children must be under age 19 (or under 25 if a full-time student) and may remain covered under the **policy** until the **first renewal date** following their 19th birthday (or 25th birthday where in full-time education) at which time their **cover** under the **policy** will end.

Հիմնական ապահովագրված անձը, ինչպես նաև **Ապահովագրության պայմանագրի** մեջ ներառված նրա **խնամքի տակ գտնվող բոլոր անձինք**, պետք է լրացնեն առողջության վերաբերյալ հարցաթերթիկ: Որևէ **նախկինում ախտորոշված առողջական վիճակ** կամ դրա հետ **առնչություն ունեցող որևէ վիճակ**, որն ինչ-որ կապ ունի տվյալ **ապահովագրության Պայմանագրի ծածկույթի** հետ և որի ախտորոշումը կատարվել է Առողջության ապահովագրության հարցաթերթիկ ներկայացնելու օրվան նախորդող 10 տարվա ընթացքում, կամ որն ախտորոշված է եղել **սպասման ժամկետի** ընթացքում, կհամարվի հատուցման ոչ ենթակա, և **մեր** պատասխանատվությունը տվյալ հիվանդության գծով կդադարի: **Մենք** իրավասու ենք մերժել Ձեր դիմումը այս հարցաթերթիկի տեղեկությունների հիման վրա:

The **principle member** and all dependents added to the policy will be required to complete a Health Insurance Questionnaire. Any **pre-existing conditions** or any **related conditions** that are in any way linked to the **benefits** provided under the **policy** that have been diagnosed within 10 years prior to the application date, or are diagnosed during the **waiting period** will result in those conditions being excluded and **our** liability in respect of the specified disease shall terminate. **We** reserve the right to decline an application based on this health declaration.

2.2. Լրացումներ, փոփոխություններ և Ձեր մտածելու ժամանակը

2.2. Additions, modifications and your cooling off period
Dependents can only be added at **policy** renewal unless there are exceptional circumstances which are agreed by **us**

Խնամքի տակ գտնվող անձինք կարող են ավելացվել միայն վերակնքվող **Ապահովագրության պայմանագրի** մեջ, բանի դեռ առկա չէ որևէ բացառիկ հանգամանք, որի գծով առկա է **Մեր** համաձայնությունը:
Խնամքի տակ գտնվող անձ Ապահովագրության պայմանագրի մեջ ավելացնելու կամ որևէ փոփոխություն կատարելու համար խնդրում ենք կապ հաստատել Ապահովագրողի հետ:

To add **dependents** under the **policy** or to modify any details, please contact the Insurer.



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

Ապահովագրության պայմանագրի գնումից հետո **Ձեզ և Ձեր խնամքի տակ գտնվող անձանց** տրամադրվում է 7 աշխատանքային օր մտածելու ժամանակ: Այդ ընթացքում **Դուք** կարող եք **լուծել Ձեր Ապահովագրության պայմանագիրը**՝ ամբողջությամբ հետ ստանալով Ձեր կողմից վճարված ապահովագրավճարը:

Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

1. **Ապահովագրության պայմանագրի** գործողության ժամկետը և/կամ **Ապահովագրության պայմանագրով** նախատեսված ապահովագրության գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,

2. **Ապահովագրության պայմանագրի** կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում **Դուք** դիմել եք ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

Ապահովագրության պայմանագիրը մտածելու ժամանակի ընթացքում **լուծելու դեպքում Ապահովագրության պայմանագիրը** համարվում է **լուծված Ձեր** կողմից **Ապահովագրության պայմանագիրը** **լուծելու մասին Մեզ** ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

Մտածելու ժամանակից հետո **Ապահովագրության պայմանագիրը** **լուծելու Ձեր** մտադրության մասին պարտավոր եք ծանուցել **Մեզ** ոչ պակաս, քան **Ապահովագրության պայմանագրի** վաղաժամկետ **լուծման** ենթադրվող ամսաթվից 15 (տասնհինգ) օր առաջ, եթե **Ապահովագրության պայմանագրով** այլ բան նախատեսված չէ: Այս դեպքում **Ապահովագրողի** կողմից **Ձեզ** վերադարձվում են **Ապահովագրության պայմանագրի** գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, իսկ հաշվարկներն իրականացվում են **Ապահովագրության պայմանագրի** վաղաժամկետ դադարման օրվա դրությամբ:

Մենք չենք կարող ետին թվով ձևակերպել **Ապահովագրության պայմանագրի** **լուծումը**, եթե մտածելու ժամանակահատվածում գրանցվել է որևէ հայտ կամ տրվել է **նախնական թույլտվություն** կամ համաձայնեցում:

Դուք իրավունք չունեք պահանջել ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար, եթե այդ մասին չեք ծանուցել **Ապահովագրողին** և եթե այդ պատահարը տեղի ունենալուց հետո, մինչև մտածելու ժամանակի ավարտը, ծանուցել եք **Մեզ Ապահովագրության պայմանագիրը** **լուծելու մասին**:

Մենք իրավունք ենք վերապահում մերժելու կամ ընդունելու **Ձեր** կամ **Ձեր խնամքի տակ գտնվող** որևէ անձի կողմից ներկայացված դիմումը, ինչպես նաև ցանկացած պահի պահանջելու ներկայացնել տարիքը, առողջական վիճակը հաստատող ապացույց (այդ թվում՝ բժշկական փաստաթղթեր), աշխատավայրից տեղեկանք և ստացիոնար կրթություն ստանալու մասին տեղեկանք:

Հիմնական ապահովագրված անձի մահ
Ձեր մահվան դեպքում **Ձեր** զուգընկերը կամ կինը/ամուսինը (իրենց, որպես խնամքի տակ գտնվող անձ, **Ապահովագրության պայմանագրի** մեջ ներառված լինելու պարագայում) ավտոմատ կերպով դառնում է **Հիմնական ապահովագրված անձ**՝ **Ապահովագրության գործողության** մնացած **ժամկետի** համար, սակայն ոչ ուշ, քան մինչև այն ժամկետը, երբ **Ապահովագրության պայմանագրով** նախատեսված **ծածկույթն** իրենց մասով ավարտվում է:

2.3. Ծածկույթի սկզբի ամսաթիվ և վերակնքման ամսաթիվ

You and any **dependents** will be provided with a 7 working day cooling off period after purchase of **your policy**. During this period **you** may **cancel your policy** with guarantee of a full refund.

Time for reconsideration shall not be applied in the following cases:

1. Effective period of the **policy** and/or insurance effective period, stipulated by the **policy**, does not exceed 1 (one) month,

2. **You** applied for receiving insurance indemnity during 7 (seven) working days, following the day of the **policy** conclusion,

In case of premature termination of the **policy** during Time for reconsideration the insurance **policy** shall be considered as terminated by **You** from the day, following the day of notifying **Us** about termination of the **policy**.

For the intention of canceling the **policy** after Time for reconsideration **You** must notify **Us** about it not less than 15 days before of the supposed date of the premature cancellation, unless otherwise specified by the **policy**. In this case **You** will be reimbursed by the Insurer for the unused period of the **policy**, and the calculations will be made on the day of the premature termination of the **policy**.

For any cancellation to the **policy** within the cooling off period, **we** will not be able to backdate the cancellation if claims have been processed or if **pre-authorization or** pre-agreement has been granted.

You are not entitled to demand insurance indemnity upon the insurance accident, that occurred during the reconsideration period, if **You** did not inform about it to the Insurer and if after occurrence of the accident **You** informed **Us** about termination of the **policy** before reconsideration period conclusion.

We are entitled to refuse or accept an application submitted by **you** or by any **dependents** and also reserve the right to ask for evidence of age, state of health (including medical records), employment status and proof of full-time education at any time.

Death of the principal member

Should **you** die, **your** partner or spouse (provided they are already covered by the **policy** as a **dependent**) will automatically become the **principal member** for the remainder of the **period of cover** or, if earlier, the date on which their **cover** under the **policy** comes to an end.

2.3. Start date and renewal date of cover



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

Ապահովագրության պայմանագրով նախատեսված ծածկույթը Ձեր մասով ուժի մեջ է մտնում Ապահովագրության պայմանագրի Սկզբի ամսաթվից, որը նշված է Ձեր Ապահովագրության պայմանագրում, սակայն ոչ շուտ քան Ձեր Մուտքի ամսաթվից և վերակնքվում է տարեկան կտրվածքով՝ Ավարտի ամսաթվին հաջորդող օրը: Ապահովագրության գործողության յուրաքանչյուր ժամկետի սկզբում Ձեզ տրվելու է Ապահովագրության պայմանագիր: Սա տարեկան կտրվածքով վերակնքվող ծրագիր է: Եթե Դուք կամ Ձեր խնամքի տակ գտնվող որևէ անձ չի վերակնքում Ձեր Ապահովագրության պայմանագիրը, ծածկույթը դադարեցվում է Ապահովագրության պայմանագրի Ավարտի ամսաթվին, և ոչ մի հետագա բուժման ծախս չի վճարվելու, նույնիսկ եթե դրանք նախապես համաձայնեցվել են:

2.4. Ապահովագրավճար

Որպես Ապահովադիր Դուք կնքել եք Ապահովագրության պայմանագիր մեզ հետ և պատասխանատու եք Ապահովագրության պայմանագրի շրջանակներում ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման համար: Ձեր կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու կամ սույն Ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան չգործելու դեպքում մենք ապահովագրավճարի վճարման համար սահմանում ենք լրացուցիչ ժամկետ՝ այդ մասին եռօրյա ժամկետում ծանուցելով Ձեզ՝ նշելով լրացուցիչ ժամկետի ընթացքում ապահովագրավճարի չվճարման իրավական հետևանքները:

Եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում Դուք չեք վճարում ապահովագրավճարը, ապա Մենք իրավունք ունենք միակողմանի լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ առանց Ձեզ այդ մասին ծանուցելու:

Եթե ապահովագրական պատահարն առաջացել է լրացուցիչ ժամկետի ավարտից հետո, և Դուք չեք վճարել ապահովագրավճարը, ապա Մենք ազատվում ենք հատուցում կատարելու պարտականությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ Դուք ապացուցում եք, որ ապահովագրավճարը չի վճարվել Ձեզից անկախ հանգամանքներում:

2.5. Փոփոխություններ Ապահովագրության պայմանագրում

Մենք իրավունք ունենք ժամանակ առ ժամանակ փոփոխելու ապահովագրավճարի չափը, Ծառայությունները և Ապահովագրության պայմանագրի պայմանները, սակայն նշված փոփոխությունները չեն կիրառվելու մինչև այդպիսի փոփոխությունների ներկայացմանը հաջորդող վերակնքման ամսաթիվը, բացառությամբ այն դեպքերի, երբ մենք օրենքով սահմանված կարգով պարտավոր ենք դրանք կիրառել ավելի վաղ:

2.6. Դադարեցում

Ձեր մասով ապահովագրության գործողությունը դադարելու է հետևյալ իրավիճակներից ցանկացածի դեպքում.

1. Դուք, որպես Ապահովադիր ժամանակին չեք վճարել ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը),
2. Դուք մոլորեցրել եք մեզ՝ էական նշանակություն ունեցող տվյալների վերաբերյալ կեղծ տեղեկություն ներկայացնելով կամ թաքցնելով, կամ պարզապես անբարեխիղճ արարքով,

Your cover under the policy is effective from either your date of entry or the start date of the policy (whichever is the later) as shown on your Policy and is renewed annually the day following the expiry date thereafter. You will receive a Policy at the beginning of each new period of cover. This is an annually renewable plan. If you or any dependents do not renew your policy, cover will cease at the policy end date and no further treatment costs will be paid, even if they have been pre-agreed.

2.4. Premiums

You, the policy holder has taken out the policy with us and are responsible for paying the premiums due under the policy. If you fail to pay those premiums or comply with the terms and conditions of the policy, we shall set an additional deadline for you to pay the premiums notifying you thereof within three days and stating the legal consequences of not paying the premiums within the set deadline.

If you do not pay the premium within the additionally set deadline, we have the right to terminate the policy unilaterally without notifying you thereof.

If the insured event occurs after the expiration of the additional deadline and you have not paid the insurance premium, we are exempt from the obligation of compensation unless you prove that the non-payment of the insurance premium was due to circumstances not depending on you.

2.5. Alterations to the policy

We may change the premium rates, benefits and terms and conditions of the policy from time to time but any such changes will not apply until the next renewal date following the introduction of such changes, unless we are legally obligated to do so beforehand.

2.6. Termination

Your cover under the policy will end in each of the following situations:

1. You, the policyholder have failed to pay any premium on the date due.
2. Where you have misled us either by misstatement or concealment of a material fact or otherwise failed to act in good faith.



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ ամբողջության ապահովագրության պայմաններ

- 3. **Դուք** չեք պահպանել **Ապահովագրության պայմանագրի պայմանները** կամ խախտել եք դրանք,
- 4. **Դուք** խարդախության հատկանիշներ պարունակող արարքով եք հանդես եկել, կամ ներկայացրել եք չափազանցած հայտ:

Մենք պարտավոր չենք վճարել **Ապահովագրության պայմանագրի** դադարեցման օրվանից հետո ստացած բուժման համար, նույնիսկ եթե անկա **Է բուժման** վերաբերյալ **նախնական համաձայնեցում**, սակայն բուժումը չի ստացվել մինչև դադարեցման օրը:

2.7. Այլ ապահովագրություն

Եթե անկա **Է** այլ ապահովագրության պայմանագիր, որով հատուցվում **Է** սույն **Ապահովագրության պայմանագրով** սահմանված **Ծառայություն** ևորի համար ներկայացվել **Է** հայտ, ապա **Դուք** պետք **Է** տեղեկացնեք **մեզ** այդ մասին՝ **բուժման** վերաբերյալ նախնական համաձայնություն ստանալու պահին, կամ երբ դուք նախապես կատարել եք համապատասխան ծախսերը, որից հետո դիմել եք այդ գումարի փոխհատուցման համար: **Դուք** պետք **Է** դրա մասին նշեք նաև հայտ ներկայացնելիս: Նշված հանգամանքներում **մենք** պարտավոր չենք վճարելու կամ մասնակցելու վճարմանը ավելի քան **մեր** համապատասխան համամասնության չափով: Եթե հայտնի դառնա, որ **Ձեր** հայտի գծով ծախսերը հատուցվել են ամբողջությամբ կամ մասամբ այլ ապահովագրական աղբյուրի կողմից, **մենք** իրավունք ունենք **Ձեզանից** պահանջելու մեր կողմից վճարված գումարի վերադարձ: **Մենք** կարող ենք վերադարձման ենթակա գումարը նվազեցնել **Ձեզ** հատուցվելիք գումարից կամ հետագա հայտերի հատուցումների գումարից, կամ լուծել **Ձեր Ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվա** դրությամբ կամ **Ձեր Մուտքի ամսաթվի** դրությամբ (որպես հիմք **Է** ընդունվում ավելի ուշ ժամկետը)՝ անանց ապահովագրավճարի վերադարձի:

2.8. Սուբրոգացիա

Նպատակահարմարության դեպքում **մենք** կարող ենք կիրառել սուբրոգացիայի իրավունքը: Այսինքն, եթե **Ձեզ** պատճառած վնասը կամ ստացված վնասվածքը եղել **Է Ապահովագրության պայմանագրի** շրջանակներում հատուցվող ապահովագրական պատահարի արդյունք, **մենք** կարող ենք օգտվել **Ձեր** իրավունքից՝ վնասվածքը կամ վնասը հասցրած կողմից փոխհատուցում պահանջելու նպատակով:

2.9. Օգնություն և միջամտություն

Մեր կողմից օգնության տրամադրումը և միջամտությունը սույն **Ապահովագրության պայմանագրի** շրջանակներում կախված **Է** ազգային և միջազգային օրենքներից և որակավորված բժշկական հաստատությունների անկայությունից: Չնայած այն բանին, որ **մենք** կաշխատենք լավագույնս հաղթահարել տեղային սահմանափակումները, մասնավորապես ֆորս-մաժորային իրավիճակները, ինչպիսիք են պատերազմը, պատերազմական գործողությունները և դրանց հետևանքները, գործադուլները, հեղափոխությունը, ապստամբությունը, ժողովրդական հուզումները, զանգվածային անկարգությունները, ահաբեկչական գործողությունները և դրանց հետևանքները, բնական աղետները, միջուկային պայթյունը, ճառագայթման ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը, և արտակարգ իրավիճակների այլ տեսակները (աղետներ և այլն), ինչպես նաև այլ բնական աղետներ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքեր, կարող **Է** այնպես պատահել, որ վերը նշվածը խոչընդոտի **մեր** կողմից օգնության տրամադրմանը կամ

- 3. Where **you** have failed to observe or breached the terms and **conditions** of the **policy**.
- 4. Where **you** have either acted in a fraudulent manner or submitted an exaggerated claim.

We will have no liability to pay for **treatment** received after the date the **policy** is terminated even if **treatment** has already been **pre-authorized** but not received as at the date of termination.

2.7. Other insurance

If there is any other insurance policy covering any of the **benefits** that are provided under the **policy** for which a claim is made, then **you** must disclose this to **us** at the time of gaining pre-agreement for the **treatment**, or where **you** have pre-paid for eligible costs and subsequently seek reimbursement. **You** should disclose this when submitting the claim. In these circumstances, **we** will not be liable to pay or contribute more than **our** proper ratable proportion. If it transpires that **you** have been paid for all or some of the claim costs by another source of insurance **we** have the right to a refund from **you**. **We** reserve the right to deduct such refund from **you** from any impending or future claim settlements or to cancel **your policy** from the **start date** of the **policy**, or **your date of entry** (whichever is the later) without a refund of premium.

2.8. Subrogation

If **we** feel it is appropriate **we** may exercise rights of subrogation. This means that if **you** have suffered an injury or loss that has resulted in a claim under the **policy** **we** may take over **your** right to seek compensation from the party that caused the injury or loss.

2.9. Help and intervention

Our provision of help and intervention under the **policy** is subject to national and international laws and the availability of qualified medical facilities. Whilst **we** will do **our** best to overcome any local restrictions, particularly force Majeure circumstances, that is: war, warfare and its consequences, strikes, revolution, revolt, insurrection, civil unrest, massive disorders, acts of terrorism and their consequences; natural disasters, nuclear explosion, direct or indirect effects of radiation, and other types of emergency situations (catastrophes etc), as well as other Acts of God, and other cases envisaged by the RA legislation, there may be times when these either prevent **us** from providing help and intervention or limit **our** ability to do so.



Արտերկրում բուժման ծախսերի հատուցմամբ առողջության ապահովագրության պայմաններ

միջամտությանը կամ սահմանափակի մեր օգնություն տրամադրելու կամ միջամտելու հնարավորությունները:

2.10. Երրորդ կողմի իրավունքներ

